ԹԱԳԱՎՈՐԻ ԱՇԽԱՐՀԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՇՂՀԱԲԱՍՅԱՆ ՍՅՈՒԺԵՆԵՐՈՒՄ

ԽԵՄՉՅԱՆ Է.
ekhemchyan@yandex.ru

Արևելքի պատմավիպական սյուժեներում տարածված մոտիվներից է ծպտված արքայի շրջագայությունն իր տիրույթներում: Ծպտված շրջագայությամբ՝ թագավորը նպատակ ունի առանց միջնորդների շփվելու իր հպատակների հետ, պարզելու ժողովրդական զանգվածների վերաբերմունքը թագակիր անձի նկատմամբ, ինչպես նաև մոտիկից ծանոթանալու նրանց կեցությանն ու հուզող խնդիրներին: Արևելյան պատմավիպական բանահյուսության մեջ այս մոտիվը հիմնականում աղերսվում է Հարուն ալ Ռաշիդի[1] և Շահ Աբասի[2] հետ: Այս երկու պատմական դեմքերը մուտք են գործել բանահյուսական սյուժեների տիրույթ, վիպականացվել, ձեռք բերել բանահյուսական հերոսին բնորոշ վիպական գծեր և վերածվել բանահյուսական հերոսների: Որպես պատմավիպական կերպարներ, նրանք իրենց հետ բանահյուսական պատումների մեջ բերել են աշխարհատեսության մոտիվը: Սակայն նրանց աշխարհատեսությունն էապես տարբերվում է իրարից: Անքնությամբ տառապող Հարուն ալ Ռաշիդը վաճառականի հագուստով և հավատարիմ ուղեկիցներով թափառում է Բաղդադի փողոցներում և արկածներ որոնում[3]: Շահ Աբասի աշխարհատեսությունը լայն ընդգր-

[1] Հարուն ալ Ռաշիդ (786–809) – Աբբասյան արքայատոհմի հինգերորդ խալիֆ, որի թագավորության տարիներին Արաբական խալիֆայթը ծաղկում է ապրել: Հարուն ալ Ռաշիդը բանահյուսական բազմաթիվ զրույցների ու պատմությունների հերոս էր:

[2] Աբաս I Մեծ (Շահ-Աբաս) – Իրանի Սեֆյան արքայատոհմի շահ, գահակալել է 1587–1629 թթ.: Ռազմավարական, քաղաքական և տնտեսական նկատառումներով 1604 թ. բռնի տեղահանել է արևելահայ ազգաբնակչությանը: Շահ Աբասը նույնպես բազմաթիվ բանահյուսական ստեղծագործությունների հերոս է:

[3] **Фильштинский И.** Вечно юная сказка (вступительная статья) – Халиф на час. Избранные сказки, рассказы и повести из «Тысячи и одной ночи», Москва, 1986, с. 14–16, Подлинные рассказы о могущественном халифе Харун ар-Рашиде, острослове Абу Нувасе и хитроумном Джухе, перевод с арабского Р. Алиева и Д. Юсуповой, Гл. ред. вост. лит-ы, Москва, 1976, с. 302.

կում ունի: Նրա շրջագայությունը դուրս է գալիս մայրաքաղաք Սպահանի սահմաններից և ընդգրկում ողջ թագավորությունը՝ նպատակ ունենալով իր երկիրն ու ժողովրդին առանց գունազարդման տեսնել, գնահատել իրական վիճակը և ըստ այդմ որոշումներ կայացնել և կառավարել երկիրը[4]:

Հայ բանահյուսության պատմավիպական սյուժեներում աշխարհատեսության մոտիվի կրողներն են Սուլթան Մուրադը[5] և Շահ Աբասը[6]: Այս երկու պատմավիպական կերպարների առկայությունը հայ վիպական բանահյուսության մեջ խարսխված է ոչ միայն արևելյան փոխառյալ սյուժեների, այլև պատմական փաստերի վրա: Նրանք, որպես պատմական դեմքեր, և հայ ժողովրդի պատմությանն անմիջական մասնակցություն ունեցած ու ճակատագրական ազդեցություն թողած միապետներ, հանգամանորեն ներկայացվել են հայ պատմագրության և պատմական ժամանակագրության մեջ[7]: Բանավոր ավանդությունն անմասն չի մնացել պատմական իրո-

---

[4] Հեքիաթաստեղծման և ձևավորման դարավոր ճանապարհին թագակիր անձի գործառույթների շարքում աշխարհատեսության մոտիվը մի քայլ առաջ է: Եթե առասպելաբանական սյուժեներում պանթեոնի գլխավոր աստվածն ունի իր և արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունն ապահովող լրաբեր ու մունետիկ աստվածություն, ինչպես օրինակ, Զևս-Հերմես փոխգործունեությունը, ապա հեքիաթներում թագակիր անձի գործունեությունը պալատից դուրս հիմնականում պտտվում է զվարճությունների, որսորդության և սեփական անձին առնչվող խնդիրների շուրջ: Թերևս հեքիաթի զարգացման ավելի ուշ շրջանում և հատկապես իրապատում հեքիաթներում ի հայտ է գալիս թագավորական գործառույթի մի նոր գիծ՝ պայմանավորված երկրի ու ժողովրդի նկատմամբ նրա ունեցած պարտականություններով: Թագավորը պետք է հասու լինի իր տերության ներսում և դրանից դուրս կատարվող իրադարձություններին, ինչպես նաև սեփական հպատակների կյանքին ու սոցիալ-տնտեսական խնդիրներին:

[5] Այս պատմական դեմքը նույնպես վիպականացվել է և դարձել տարբեր զրույցների ու պատումների հերոս: Հավանաբար վիպական Սուլթան Մուրադի կերպարի ձևավորման համար հիմք են ծառայել Մուրադ անունով օսմանյան սուլթաններից մի քանիսը:

[6] Պետք է նկատել, որ խոսքը արևելյան պատմավիպական հերոսների մասին է, մինչդեռ հայ բանահյուսական սկզբնաղբյուրներում հանդիպում են նաև հայազգի պատմավիպական կերպարներ, որոնց մասին պատմվող սյուժեները սկսվում են աշխարհատեսությամբ, օրինակ. «Գազիկ թաքավերը օրերից մի յօր յէր ա կենում իրան աշխարը ման կյա՛լի, հետը վա՛զիրն ա ըւո՛ւմ, մընել իրան տղեն: Կյա՛լիս ա տո՛ւս կյա՛լի Գարթմանա ծո՛րը…» (Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետ՝ ՀԱԻԲԱ) FF VIII: 5817,01–5821,00, բանասաց Հակոբ Բաղրամյան, Ադր. ՍՍՀ Շամխորի շրջան, Ջազիր գյուղ, 1972): Հետևաբար կարելի է ասել, որ աշխարհատեսության մոտիվը բնորոշ է նաև հայ հեքիաթապատումին:

[7] Տե՛ս **Առաքել Դաւրիժեցի**, Պատմութիւն, Էջմիածին, 1896, **Ձաքարեայ Սարկաւագի** Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, **Խաչատուր Ջուղայեցի**, Պատմութիւն

ղությունների յուրովի մեկնաբանությունից, որի հետևանքով ստեղծվել և շրջանառության մեջ են դրվել պատմավիպական պատումների բազմաթիվ տարբերակներ:

Հայ շահաբասյան պյուժեները կառուցված են որոշակի մոտիվների վրա, որոնք աներկբա մատնացույց են անում Շահ Աբասին և ուղեկցում են նրա կերպարին: Շահ Աբասին վերագրվող մոտիվների շարքում առաջնային տեղ է գրավում աշխարհատեսության մոտիվը: Այն պատմագրության մեջ դիտարկվել է որպես պատմական իրողություն. «Եւ որպէս յառաջդ ասացուք. **այլակերպեր զինքն շահն**, և շրջէր ի փողոցս և ի պողոտայս ի լսել թէ զինչ ասեն»[8]: Նույն փաստը վկայակոչել է նաև Զաքարիա Սարկավագը. «Սովորություն էր Շահ Աբասին՝ որ երբեմն երբեմն **յայլակէրպս եղեալ շրջէր**»[9]: Շահ Աբասի ծպտված շրջագայելու սովորության մասին Համբարձում Առաքելյանն իր գրքում վկայակոչում է Ադամ Օլեարիուսի[10] դիտողությունն այդ մասին. «Նա շատ զգայուն էր դեպի աղքատների թշվառությունն եւ առանձին խնամք էր տանում նրանց վրայ. այդ պատճառով նա սովորություն ուներ մտնել քաղաքը, գյուղը, ծպտեալ գնալ շուկան, տեսնել չափը, կշիռը, քննել մսի եւ հացի որակութիւնն, եւ սաստիկ պատժել տալ խարդախներին»[11]: Ծպտված շրջագայությամբ արքան հասու է դարձել իր երկրի անցուդարձին, խմորվող տրամադրություններին, ժողովրդի կենսակերպին, անարդարություններին:

Պատմագրությունը փաստում է նաև Սուլթան Մուրադի կերպարանափոխված շրջագայությունների միջոցով ճշմարտությունը վերհանելու և օրինազանցներին պատժելու սովորությունը. «Այս սուլթան Մուրատ թագաւորս կարի առաւելաւ արիութեամբ և քաջութեամբ, և սրտեղութեամբ և խելօք և յոյժ հնազանդեցոյց զՕսմանցիսն, որ ի յիշել զանունն սարսէին, զի ***թաղքիր սուրաթ եղեալ*** (կերպարանքը փոխած – Խ.Է.)հանապազ շրջէր ի մէջ քաղաքաց և ի մէջ բանակի զօրացն և ի մէջ ենկիչարոցն և սպայոցն, և

Պարսից, Վաղարշապատ, 1905, **Տէր-Հովհաննեանց Հ.**, Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հ. Ա և Բ, Նոր-Ջուղա, 1880, Մանր ժամանակագրություններ XIII–XVIII, կազմեց Հակոբյան Վ., հ. I, Ե., 1951, հ. II, Ե., 1956, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.), հ. Ա, կազմ. Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Ե., 1974:

[8] **Առաքել Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 199:

[9] **Զաքարեայ Սարկաւագի** Պատմագրութիւն, էջ 15:

[10] Ադամ Օլեարիուս (1599–1671), գերմանացի փիլիսոփա, արևելագետ, պատմաբան, ճանապարհորդ, որպես դեսպանության քարտուղար եղել է պարսկական արքունիքում, նկարագրել է իր ուղևորությունները:

[11] **Առաքելեան Հ.**, Պարսկաստանի հայերը, Վիեննա, 1911, էջ 74–75:

տեսանէր և լսէր զչարութիւնս և զանիրաւութիւնս նոցա. այլ և ի մէջ գոեհիկ շինականաց շրջեալ հարցանէր և տեղեկանայր ի նոցանէ զանիրաւութիւնս և զյափշտակութիւնս փաշաներաց և իշխանաց. և ի վաղուեան աւուրն առժամայն չարամահ արարեալ սատակէր, և բազում զօրեղ և նշանաւոր փաշայք և իշխանք, և շէխ, և ղադի և մուֆթի կոտորեաց, և անխնայ կոտորէր իբրև զոչխար, վասն որոյ ամենեքեանքն սարսեալ դողային ի նմանէ»[12]:

Բանահյուսական ավանդույթում այս մոտիվով կառուցվել ու զարգացել են բազմաթիվ սյուժեներ, որոնցում ծպտված թագավորը, մեր պարագայում՝ Շահ Աբասը, գործուն մասնակցություն է ունեցել և ուղղորդել կատարվող իրադարձություններն ըստ իր ցանկության: Բանահյուսական սկզբնաղբյուրներում Շահ Աբասի աշխարհատեսության նպատակը կոնկրետ է. «Շահաբասը սովորություն օներ դերվիշու շորեր ար հագնում, տյուս կյնմ քաղաքը ման կյնմ, վըեր տըսնա՝ ժողովուրդը ուրան անա գոհ ը՞ն, անգոհ ը՞ն, հո՞ւվ ա իրանից կյենգնատ անըմ, հո՞ւվ ա թարիփ անում ... տի, միշտ դերվիշու շորերում, ման ար կյնմ, ուրան նազիր-վեզիրներին նետ»[13]: Շահ Աբասի աշխարհատեսության դրդապատճառներից մեկն էլ անվստահությունն է իր պաշտոնյաների հաղորդած տեղեկատվությանը, նա անձամբ է կամենում տեսնել ու ականջալուր լինել իր թագավորության ու հպատակների իրական, չմիջնորդավորված վիճակին՝[14] արդար վճիռ կայացնելու համար. «Շահ օղլի Շահ Աբբազը էնպսի թաքավոր ա եղել, վըեր նա, վըեչ թե գնացել են նրա սուտ ու ղորթ ասել, վըեր էս ինչ մարթը էս ինչ հանցանքի տերն ա, այլ թե նա ինքը իրան շորերը փոխիլիս ա եղել, դավրիշի շորեր հաքնիլիս, իրեն վազիրի հետ գնալիս են եղել գյուղեր, քաղաք ման

---

[12] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1884, էջ 443–444:

[13] Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետ՝ ՀԱԲ) 15, Ղազիյան Ա., Արցախ, Ե., 1983, 89: Բնագիրը գտնվում է՝ ՀԱԻԲԱ, FF XII: 3159,01-3171,00, Բ. Ղազիյանի հավաքածու:

[14] Աքեմենյան Պարսկաստանում արքունիքում կային հատուկ աստիճանավորներ, ովքեր արքայի «աչքը» և «ականջն» էին համարվում: Ինչպես հաղորդում է Հերոդոտոսը, Մեդաց Դեյոկես թագավորը նույնպես հետևում էր այդ կարգին. «…իր իշխած ամբողջ երկրում կային լրտեսներ և ականջ դնողներ», ովքեր ապահովում էին տեղեկատվությունը երկրի անցուդարձի, հանցագործությունների և այլ իրադարձությունների մասին (**Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, Ե., 1986, էջ 45):

գալ, վըեր նա իրեն աչկովը տեսնա, վըեր նոր նրա դատը ինքը անի»[15]: Հետևաբար Շահի աշխարհատեսությունն ինքնանպատակ չէր, այլ թելադրված էր պետական, քաղաքական, սոցիալական խնդիրների խորը և համակողմանի ուսումնասիրության և պետության շահերին համապատասխան ընթացք տալու մտահոգությամբ:

Հայ բանահյուսության շահաբասյան սյուժեներում թագավորի աշխարհատեսության մոտիվի զարգացումները վերաճում են նոր, միայն շահաբասյան սյուժեներին բնորոշ մոտիվների.

ա) ծպտված Շահ Աբասն ընկերանում է իր գանձարանը կողոպտողների հետ և մերկացնում նրանց արարքը,

բ) Շահ Աբասը պատահականորեն ականջալուր է լինում աղքատ ընտանիքում ծնվող երեխայի ճակատագրի որոշմանը և փորձում է կանխարգելել դեպքերի ընթացքը,

գ) շահն ականատես է լինում երջանիկ համարվող ընտանիքում կատարվող դավաճանությանը, որի պատճառով ցանկանում է ոչնչացնել կանացի սեռը,

դ) շրջագայության ընթացքում Շահ Աբասը ծանոթանում և գնահատում է հասարակ ծագումով աղջկա (նախրչու, հովվի, գյուղացու, ջրաղացպանի աղջիկ) խելացիությունը և ամուսնության առաջարկ է անում,

ե) ծպտված շահն այլաբանական զրույց է վարում ջուլհակի, ծերունու, գյուղացու և այլոց հետ, որի իմաստն իր ուղեկիցների (հիմնականում՝ վեզիրի) համար անհասկանալի է և պահանջում է մեկնաբանել այլաբանությունը,

զ) շրջագայող Շահ Աբասը կորցնում է, երբեմն էլ միտումնավոր թողնում է դրոշմակիր, ամեն ինչ թույլատրող թագավորական հրովարտակը, որը գտնող երիտասարդն այն օգտագործում է շահեկանորեն,

է) ծպտված Շահ Աբասն ականատես է լինում տարբեր անօրինական արարքների (եզան հետ մորը լծած հողագործի, հրեաներից խաբված, Թավրիզում աղվեսի մորթի վաճառող հայի և այլն) և համապատասխան կարգադրությամբ կանխարգելում դրանք,

ը) ծպտված շրջագայությամբ Շահ Աբասը հասու է դառնում իր հպատակների ունեցվածքին, աշխատանքային կարողություններին ու հնարա-

[15] ՀԱԲ 21, Է. Խեմչյան, Տավուշ, 2000, 138, № 42(42), «Կնիկ էլ կա՝ կնիկ էլ»: Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FEI: 7813–7835, Է. Խեմչյանի ֆոնդ, Շամշադին, Չորաթան, 1984:

վորություններին և ավելացնում է պետական հարկերը, որոնք տանում են ծայրահեղ աղքատության և այլն:

Բանահյուսական սյուժեներում Շահ Աբասը հանդես է գալիս դերվիշի կամ չարչու (շրջիկ մանրավաճառ), աղքատ գյուղացու կամ մուրացկանի կերպարի տակ՝ ընկերակից ունենալով իր մերձավորագույն ու վստահելի վեզիրին: Պատումների մեծ մասում թագակիր անձը ներկայացվում է Շահ Աբաս անունով: Այն պատումները, որոնցում միայն շահ ձևն է օգտագործված, սյուժեի զարգացումը հուշում է, որ խոսքը Շահ Աբասի մասին է, կամ էլ մինչև պատումի վերջը բանասացը հիշում է շահի անունը: Շահ Աբասի ուղեկից վեզիրը երբեմն անանուն է, երբեմն անվանակիր, ինչպես օրինակ. «Շահօղլի Շահ Աբասին մի վԹզիր ա ունենըմ, անըմը՝ ***Ալահվերդի խան***»[16]: Կամ. «Նաղլն ըրիս, որ շահ Աբբասե խասյաթ լալ՝ ***Ալահվերդի խան*** վազիրեն նհետ դարվիշու շորրն լալ գինալիս, քիշերները քաղաքեն քյուչենավը շոռ գյոլիս, թա տըսնըն քաղաքմը հի՞նչ ա կադարվիս, ժողովուրթը հի՞նչ ա ըրիս, հունչո՞ւր ա ըպրիլիս»[17]: կամ. «Շահ Աբբաս թաքավորի վեզիրի անունը Ըսլան էր, ամա ազգը շեխ էր, կասին՝ ***Շրխըպան***»[18]: Ըստ որում, անվանակիր վեզիրը, ինչպես Շահ Աբասը, պատմական նախատիպ է ունեցել:

Դերվիշներն ու չարչիները հասարակության այն շերտն էին կազմում, ովքեր ազատ տեղաշարժվում էին ողջ երկրում, ընդունվում ժողովրդի բոլոր խավերի կողմից, շրջագայում գյուղերում ու քաղաքներում, քաջատեղյակ էին երկրի անցուդարձին, տեղեկատվության կրողներ և տարածողներ էին: Կերպարանափոխված Շահ Աբասը շրջագայում է քաղաքներում, գյուղերում, շփվում է հասարակության բոլոր խավերի հետ, հյուրընկալվում է նրանց տներում: Նա մարդամոտ, հետաքրքրասեր ու զրուցասեր մարդ է, որը զրուցակցին տրամադրում է սրտաբաց ու անկեղծ զրույցի և ստանում իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները: Նա օժտված է դիտողականությամբ, և նրա սրատես աչքից չի վրիպում ոչ մի մանրուք: Ծպտված լինելու հանգամանքը նրան հնարավորություն է տալիս խորամուխ լինել ամեն ինչի և արդեն, որպես միապետ, միջամտել կատարվող իրադարձություններին: Նրա հետագա պահվածքը բացահայտում է կերպարի հակասակա-

---

[16] ՀԱԻԲԱ, FFV: 0463,01–0465,00, «Ալահվերդի խանը», Ա. Կարապետյանի հավաքածու, 1961, Իջևան, Ջողազ:

[17] **Հովսեփյան Հ.**, Ղարադաղի հայերը, Բանահյուսություն, հ. II, Ե., 2009, էջ 255, № 4(62), «Շահը հոքմը ետ ա եր կալալ»:

[18] ՀԱԻԲԱ, FFVII: 6747,01–6796,00, «Մահամմադի կնիգը», գրառել են Ա. Նազինյանը և Վ. Սահակյանը, 1967, Գորիս:

նությունն ու երկվությունը: Նա կարող է լինել հանդուրժող, կարեկից ու բարի, կարող է լինել նաև դաժան ու նենգ: Որպես պատմական անձ, Շահ Աբասը հենց այդպիսին էլ եղել է և պատահական չէ, որ հայ պատմագրության մեջ ներկայացվել է որպես խորամանկ, դաժան ու նենգ. «Իսկ վիշապն անդընդային Շահաբաս՝ որ ի սկզբանէ զբարս օձի ունի բնաւորեալ յինքեան ընդդէմ քրիստոնէից, իբրև տեսանէր զայնքան հարստութիւն և զբարեվայելչութիւն քրիստոնէից՝ մախայր և զգայոէր ի սրտի՝ թէ զիարդ պատճառ և ժամ գտցէ նենգել զնոսա: Բայց առ ժամն ծածկեալ զթոյնսն առ երեսս սրտահաճուկ լինէր»[19]:

Բարի ու կարեկից միապետ ունենալու ցանկությամբ պայմանավորված ժողովրդական պատումներում Շահ Աբասը գունազարդվել է, ձեռք է բերել բնավորության դրական գծեր, նրա անվան շուրջ հավաքվել են պատմություններ, որոնցում առկա թագավորական անձը համապատասխանում է ժողովրդական պատկերացումներում հորինված լավագույն թագավորին: Շահ Աբասի կերպարի ժողովրդականությանը նպաստել են նաև նրա երկդիմի քաղաքականությունը, կրոնական հանդուրժողականության առերես դրսևորումները, հասարակության ընդերքում ձևավորված վախի, հավատի և լավագույնի ակնկալիքի մթնոլորտը:

Թագավորի աշխարհատեսությամբ պայմանավորված մոտիվներն այնպես են սերտաճել Շահ Աբաս միապետի անձին, որ դրանք բանահյուսական ավանդույթում դիտարկվում են որպես շահաբասյան պատմություններ: Ժանրային նկարագրով դրանք հիմնականում իրապատում հեքիաթներ են: Ըստ դիտարկումների՝ շահաբասյան պատմություններով հեքիաթներն իրենց բնույթով ներկայացնում են իրապատում հեքիաթների բոլոր տարատեսակները՝ արկածային, երգիծական և բարոյախրատական: Թեմատիկ առումով նույնպես շահաբասյան պատմություններն առանձնանում են և հանդես են գալիս հեքիաթային տիպերի որոշակի շրջանակում: Պատումների շարադրանքից ակնհայտ է դառնում թագավորի իրական, շոշափելիության աստիճան մարդկային դրական ու բացասական հատկանիշներով օժտված կերպարը: Տարբերակների առատությունը հնարավորություն է տալիս դատելու պատումների ժողովրդականության, տարածվածության ու պահանջարկի գերադրական աստիճանի մասին: Պատումները հագեցած են ուսանելի ու բարոյախրատական եզրահանգումներով, որոնք ունկնդրին մտորելու և հետևություն անելու հնարավորություն են տալիս: Շահ Աբասի աշխարհա-

[19] **Առաքել Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 52–53:

տեսության հիմքում ընկած են նրա նպատակները. ավելի լավ ճանաչել իր հպատակներին, մոտիկից ծանոթանալ նրանց կյանքին, կենցաղին, հասկանալ նրանց հուզող պահանջների ու խնդիրների արդարացիությունն ու անարդարացիությունը, որոշակիացնել իր՝ որպես միապետի բռնելիք դիրքն ու հնարավորինս արդարացի վճիռ կայացնելու իրավունքը: Սովորաբար Շահ Աբասի աշխարհատեսության ավարտին հետևում է նրա հրաման-որոշումը՝ պայմանավորված իր գաղտնի ուսումնասիրություններից բխող եզրակացություններից, որպես շահական արդարադատության գերագույն դրսևորում և վճիռ: Հատկանշական է, որ շահի հրամաններն իրենց բնույթով տարբերվում են. մի դեպքում նա հանցագործներին չի պատժում, այլ հնարավորություն է տալիս գիտակցելու իրենց սխալը և վերափոխվելու. «Ասըմ ա.- Իմ հողից տո՛ւս եկեք, էլ էդ տեսակ պա՛ն չանեք: Քյնա՛ցեք, վըեր ծեզ կախաղան չպրցնեմ»[20], մեկ այլ պարագայում նա հանցավորներին փոխարինում է նոր, պարտաճանաչ ու ազնիվ աշխատողներով. «Կյա՛լիս ա հրաման ա տալի՝ էտ ճա՛շըրանի մեծերին թա՛մո՛ւզին փոխըմ ա, նոր տհա՛նք սկսըմ են լա՛վ ճա՛շ էփիլը»[21] կամ գնահատում է դիմացինի շրջահայացությունն ու խելացի պահվածքը և համապատասխան վերաբերմունքի է արժանացնում. «Շահաբասը էտ չոբանին խաթրին նի չը եկը, լա՛վ-լա՛վ նվերներավ ճհամպա քցից…»[22]:

Շահ Աբասի ծպտված աշխարհատեսության միջավայրը հիմնականում նրա նստավայր քաղաքն է, իր թագավորությունը՝ տարբեր մեծ ու փոքր բնակավայրերով, երբեմն նաև թագավորության սահմաններից դուրս «աշխարհ-աշխարհ» անվանվող տարածքները, որոնք նրա ռազմավարական հետաքրքրությունների կիզակետում են և կարոտ են տեղեկատվական անմիջական արդյունքների՝ հետագա նկատառումների համար: Շրջագայության տևողությունը համապատասխանաբար կանոնակարգված է: Եթե շրջագայությունը սահմանափակվում է մայրաքաղաքի տարածքով, ապա այն կարող է մեկ օր ու գիշեր տևել: Գիշերային շրջագայությանը նախորդում է արքայական հրամանը. «Շահ Աբբասը հրամայում է՝ ժամը իննից ետ լուս չըինի քաղաքի մեչը»[23]:

---

[20] ՀԱԻԲԱ FEI: 2381-2393, «Շահ Աբազն ու կյո՛ղերը», Է. Խեմչյանի հավաքածու, Շամշադինի շրջան, գյուղ Թովուզ, 1979:

[21] ՀԱԻԲԱ FFV: 0287,01–0292,00, Ա. Կարապետյանի հավաքածու, Իջևանի շրջան, գ. Ենոքավան:

[22] ՀԱԻԲԱ FFX: 2515,01–2536,00, Մ. Գևորգյանի հավաքածու, Գորիս:

[23] ՀԱԻԲԱ FFVII: 6489,01–6496,00, Ա. Նազինյան, Վ. Սահակյան, 1967, Սիսիան:

Քաղաքում նա շրջում է մարդաշատ վայրերում՝ փողոցում, շուկայում, մտնում է խանութները. «…խանութի բոլոր պոլկաների վրա նայում ա, թե ի՞նչ ա պակաս…»[24], «…քիշերները քաղաքեն քյուչենավը շոռ գյոլիս, թա տըսնըն քաղաքըմը հի՞նչ ա կադարվիս, ժողովուրթը հի՞նչ ա ըրիս, հունչո՞ւր ա ըպրիլիս»[25]: Իր սոցիալական բարձր դիրքը քողարկելով ցածր խավին բնորոշ հագուստի տակ («դ՞ովրիշի ֆորմ»[26], «ուզողի շորեր»[27], «չարվադարի շորեր[28], «ո՞ւրո՞ւշ շոր»[29], «կյեղացու շորեր ա հաքնըմ»[30] և այլն) կերպարանափոխվելով՝ Շահ Աբասը, որպես հավասարը հավասարի հետ, հեշտությամբ շփվում է սոցիալական ցածր խավի տարբեր ներկայացուցիչների հետ և իր՝ «օձին բնից հանելու» առանձնահատկությամբ ու դիտողականությամբ հասու է դառնում այն իրողություններին, որոնք սովորաբար թաքցվում են իշխանավորներից: Ի տարբերություն կարճատև շրջագայության՝ Շահ Աբասը երկարատև շրջագայությամբ ընդլայնում է աշխարհատեսության սահմանները՝ հասնելով իր տերության հեռավոր անկյունները և հարևան երկրների հետաքրքրություն ներկայացնող տարածքները: Հետևաբար նմանօրինակ հեքիաթներում շեշտվում են ոչ միայն շահի նպատակը, այլև շրջագայության նախատեսված ժամկետը. «Ման կյա՛լու ժամանակ ***մի էրկու տարի*** աշխարքը պտտիլ դեն, որ իրեն ժողովրթի վիճակն իմանան»[31] կամ «Մտնում են ամեն պատահած կյո՛ւղ, էնքան ման են կյա՛մ, վեր ***մի տարի ժամանակ ա անցնում***»[32] կամ. «Կանչըմ ա իրան տեղակալին, ասըմ ա. Ես ***մի տարով*** քնա՛լ դեմ ժողովուրթի մեջը ման կյա՛լ, իմ տեղը տո՛ւ պետկ ա ղեկավարես երգիրը»[33]:

---

[24] ՀԱԲ 25, 2008, 217, № 79(79), «Աշխար ա, ոնց բըռնըցնես, ըտենց էլ կգնա»:

[25] **Հովսեփյան Հ.**, նշվ. աշխ., էջ 255, № 4 (62), «Շահը հոքմը ետ ա եր կալալ»:

[26] ՀԱԲ 25, 2008, 227, № 90(90), «Շահ Աբազն ու չութչին»:

[27] ՀԱԻԲԱ FFIV: 9381,01–9384,00, Ա. Կարապետյանի հավաքածու, Իջևան:

[28] ՀԱԻԲԱ FFX: 2515,01–2536,00, Մուշեղ Գևորգյանի հավաքածու, Գորիս, 1971:

[29] ՀԱԲ 25, 2008, 226, № 87(87), «Շահ Աբասն ու վնասով աշխատող խանութպանը»:

[30] ՀԱԻԲԱ FFVII: 7898,01–7904,00, բանահավաք Ա. Կարապետյան, Իջևանի շրջան, Աչաջուր գյուղ, 1960:

[31] ՀԱԲ 25, 2008, 215, № 78(78), «Աստծու կյամծը ճընչիլ չի ըլի»:

[32] ՀԱԻԲԱ FFIV: 7593,01–7603,00, Տ. Խոջայանի հավաքածու, Գանձակի շրջանի Շահումյան գյուղ, 1967:

[33] ՀԱԻԲԱ FFIX: 9655,01–9672,00, Ա. Կարապետյան, Իջևանի շրջան, Այգեհովիտ գյուղ, բանասաց՝ Բ. Ղևոնդյան, 1960:

Երկարատև շրջագայությունը հնարավորություն է տալիս ավելի հանգամանորեն ծանոթանալ ժողովրդի վիճակին, ապրել նրա հետ նույն միջավայրում, ծանոթություններ հաստատել, իր համար կին ընտրել և այլն:

Շահաբասյան սյուժեների քննությունը ցույց է տալիս, որ շահի ծպտված աշխարհատեսությունը յուրօրինակ ելման դիրք է ապահովում հեքիաթային որոշակի մոտիվների համար, որոնց մի մասը թվարկվեց ուսումնասիրության սկզբում: Իրապատում հեքիաթի հերոս Շահ Աբասի հիմնական գործառույթն ուղևորությունն է, որը պատումի ընթացքում վերաճում է սյուժեով առաջադրված խնդրի լուծմանը: Իրապատում հեքիաթի խնդիրներն արմատապես տարբերվում են հրաշապատում հեքիաթի խնդիրներից: Եթե հրաշապատում հեքիաթի հերոսը կարիք ունի հրաշագործ օգնականների ու խորհրդատուների, որոնց օգնությամբ լուծում է առաջադրված խնդիրը, ապա կերպարանափոխված Շահ Աբասն իրեն տրված իշխանությամբ ի զորու է լուծելու ցանկացած խնդիր: Ըստ այդմ՝ Շահ Աբասին աղերսվող մոտիվների զգալի մասում ընդգծվում է նրա արքայական իրավունքների կիրառմամբ՝ առաջացած խնդիրներին ու հարցերին լուծում տալու կարողությունը: Սակայն շահաբասյան սյուժեներում առկա է մոտիվների մի խումբ, որոնցում առաջին պլան է մղվում և ընդգծվում ամենակարող Շահ Աբասի անկարողությունը՝ նախապես կանխորոշված դեպքերը կասեցնելու (ճակատագրի հեքիաթներ) կամ էլ սխալ որոշմամբ բնական կարգը խաթարելու (կանացի սեռը ոչնչացնելու մասին հեքիաթներ) հարցերում:

Արևելյան հեքիաթներին բնորոշ վաղնջական մոտիվներից է կանխորոշված ճակատագրի մոտիվը (ըստ Աարնե Թոմփսոնի՝ AaTh 930 տիպ)[34], որ սերտորեն առնչվում է շահաբասյան բանահյուսական սյուժեների հետ: Այս մոտիվի տարբերակների[35] սյուժեները աննշան փոփոխություններով գրեթե նույնն են: Վեզիրի հետ ծպտված շրջագայող Շահ Աբասը հանդիպում է նորածինների ճակատագիրը գրողին և տեղեկանում, որ իր աղջկա

[34] **Aarne A., Thompson S.**, The Types of the Folktale. A Classification and Bibliography. Antti Aarne's, Verzeichnis der Märchentypen. Translated and Enlarged by Stith Thompson, Second Revision, Helsinki, 1964.

[35] ՀԱԻԲԱ FFIV: 7593,01-7603,00, «Ճակատակիրը ճնճվիլ չի», բանասաւավաք Տիգրան Խոջայան, բանասաց Հայրապետ Բաղրամյան, Գանձակի շրջանի Շահումյան գյուղ, 1967, ՀԺՀ VI, 1973, 392, № 101, «Կյրաձը ճնջվիլ չի», ՀԱԲ 25, 2008, 215, № 78(78), «Աստծու կյրաձը ճընջիլ չի ըլի»», ՀԱԻԲԱ, Բ. Ղազիյանի ֆոնդ, «Ղարսաբաղի բանահյուսություն», 1983, «Ճըկատեն կյիրաձը ճինջվիլ չի», էջ 10–15:

հետ նույն ժամանակահատվածում ծնված աղքատի (տրբ.՝ նախրչու) տղան իր փեսան է դառնալու. «Հենց էտ սհաթը էտ մարթը հերթիկովը տյիւս ա կյնմ հարցնում են.- Տիւ հի՞նչ մարթ ես, որ տան տյիւռը թողած՝ հերթիկով մտար:

Շահը ուզըմ ա իմանա՝ տա ինչ մարթ ա: Նա պատասխանըմ ա.- Ես կյրիղ եմ:

Շահը հարցնում ա.- Ի՞նչ ես կյրել:

Ասում ա.- Էս քշեր Շահաբազին մի ախճիկ իլավ, էս քասիբին էլ՝ մի տղա, ես կյրեցի, որ էն ախճիկը էտ տղին արժանանա:

Էտեղ նազիրը ասըմ ա.- Կրածը ճնջվիլ չի:

Շահի միջքին ցավ ա տամ, մտածում ա. «Էնպես կանեմ, որ էս պյնը կլուխ չկա»:[36]

Ամենազոր Շահ Աբասը գնում է նորածին տղային («օխտը ըստիլ ոսկի են տյիւմ»[37], «մի տոպրակ ոսկի ա տալի»[38], «տրյն մի կից ոսկի ա տալի»[39])՝ ոչնչացնելու նպատակով:

Անտառում թողնված կամ ձորը շպրտված մանկիկին մայրություն է անում պախրան կամ վայրի այծը, մինչև նրան գտնում են իր ծնողները կամ էլ որսորդը (տրբ.՝ հովիվը): Երեխան ապահով մեծանում է, տարիներ անց շրջագայող շահը կրկին հանդիպում է նրան և հասկանում («ծեռաց ճընանչըմ ա»), որ սա ճակատագրորեն սահմանված տղան է: Նրանից իսպառ ազատվելու համար շահը նրան նամակ-հանձնարարականով ուղարկում է պալատ «իր տեղակալին» (տրբ.՝ փոռնչուն), որպեսզի նրան ոչնչացնեն: Հոգնած երիտասարդը քնում է արքայական այգում, որտեղ էլ թագավորի աղջիկը, փոխելով հոր նամակը, փրկում է երիտասարդին և ամուսնանում նրա հետ: Երկարատև շրջագայությունից վերադարձող թագավորը պալատում տեսնում է տղային և իր թոռներին. «… բայց դե ի՞նչ դի անիլ, էն ա աստծու իրեք կյրյածը ճընջիլ չի ըլի»[40]:

Հեքիաթների այս խմբում պահպանված ճակատագրի մասին եղած հնագույն պատկերացումներն ու հավատալիքներն աղերսվել են ժամանակագրորեն ուշ ձևավորված Շահ Աբասի պատմավիպական կերպարին, ձեռք բերել բարոյախրատական երանգավորում և ամփոփվել դարավոր

[36] ՀԱԻԲԱ FFIV: 7593,01-7603,00

[37] Նույն տեղում:

[38] ՀԺՀ VI, 1973, 392:

[39] ՀԱԲ 25, 2008, 215:

[40] Նույն տեղում:

փորձով հաստատագրված եզրակացություն-բանաձևի մեջ՝ «Կյրնածը ճընջվիլ չի»՝ միաժամանակ ընդգծելով զորեղ արքայի անկարողությունը անխուսափելիության հանդեպ: Քննության առնված հեքիաթներից առաջինում գրողը հանդես է գալիս ծերունու կերպարով. «մի պառավ մարթ, մ՚ուրՒուքը դՒՒշին նստած, ղալամը ծեռին, կյիր ա կյրըմ»[41]: Նա բնակվում է մեկուսի վայրում, եղեգնուտում թաքնված «կոկալի» մեջ և գրում է նորածինների ճակատագիրը, ընդ որում, հրաշալի գիտի իր դատին հանձնված նորածինների ծնողների սոցիալական պատկանելությունը, որը չի ազդում նրա որոշումների վրա: Իսկ «Ճակատագիրը ճնճվիլ չի» հեքիաթում գրողը գործում է գիշերով: Նա երդիկով մտնում է նորածնի տուն և տեղում որոշում ու գրում երեխայի ճակատագիրը: Երրորդ տարբերակում Շահ Աբասի «վազիրն էլ գիտնական ա ըլել» և գուշակության շնորհ է ունեցել, որը նրան հնարավորություն է տվել գուշակել աստվածային որոշումը երեխայի հետագա կյանքի վերաբերյալ:

Ինչպես տեսնում ենք՝ հեքիաթներում ճակատագրի գրառման գործառույթները էականորեն տարբերվում են միմյանցից, այն իրագործող անձինք էլ տարբերվում են, սակայն նրանց կատարած գործողությունը թելադրվում և վերահսկվում է գերագույն աստվածության կողմից[42], այսինքն՝ նրանք

---

[41] ՀԺՀ VI, 1973, 392, № 101 «Կյրնածը ճնջվիլ չի»:

[42] Կանխորոշված ճակատագիրը կանխելու նպատակով երեխային ոչնչացնելու հնագույն մոտիվն ավանդվել է և առասպելաբանական պատմվածքների և պատմագրության միջոցով: Ըստ հունական առասպելաբանության, մանուկ Տելեփոսին (Τήλεφος՝ եղնիկի [կաթը] ծծող) Հերակլեսի և Ավգեի որդուն զցում են Պարթենիոս լեռան անտառներում, որպեսզի ոչնչանա և կանխվի Արկադիայի որդիներին (Արկադներ) սպանելու գուշակությունը: Երեխային սնում է եղնիկը, իսկ գտնում և մեծացնում են հովիվները՝ անվանելով Տելեփոս (**Ботвинник М.Н**., Телеф, Мифы народов мира т. II, Москва, 1988, с. 498–499). Ոչնչացնելու նպատակով լքված երեխայի մոտիվն առկա է նաև Հերոդոտոսի մոտ: Մեդաց թագավոր Աստյուագեսը նույնպես գուշակությանը խոչընդոտելու նպատակով կարգադրում է իր թոռանը՝ նորածին Կյուրոսին թողնել գազանաշատ լեռներում: Նրան իր հովանու տակ է վերցնում խաշնարածը, իսկ սնուցում է նրա կինը՝ Սպակոն (մեդացիների լեզվով՝ շուն), (**Հերոդոտոս,** նշվ. աշխ., էջ 47–49): Ըստ իրանական հավատալիքների՝ շունը գերագույն աստված Ահուրամազդայի սրբազան կենդանին է, հետևաբար լքված մանկիկի կյանքը վերահսկվել է հենց գերագույն աստվածության կողմից: Ծագումնաբանական նույն մոտիվն է ընկած հունական առասպելի հիմքում՝ Արտեմիսի նվիրական կենդանին՝ եղնիկը, սնուցելով մանկիկին, միջնորդավորված ձևով իրագործում է աստվածուհու հովանավորությունը: Ճակատագրի մասին այս հնագույն մոտիվը ժամանակի ընթացքում ձևափոխվելով՝ որպես վերապրուկ, գոյատևել է շահաբասյան բանահյուսական սյուժեներում:

աստվածային կամքի իրագործողներն են[43] և նրանց միջնորդավորված որոշումներն էլ անբեկանելի են: Իբրև աստվածային կամքի պատգամաբերներ՝ գրողները արձանագրում են նորածինների հետագա կյանքի ընթացքը, որը Ճահ Աբասը փորձում է փոփոխել ըստ իր ցանկության: Ճահ Աբասի գործողությունների շարժառիթը պայմանավորված է սոցիալական անհավասարությամբ. աղքատի տղան և թագավորի աղջիկը, ըստ նրա, անհամատեղելի են: Տղային ոչնչացնելու բոլոր փորձերը մատնվում են անհաջողության, որովհետև ճակատագիրը ջնջել հնարավոր չէ, թեկուզ դա ցանկանում է իրագործել զորեղ թագավորը:

Մոտիվի քննությունը հանգեցնում է այն բանին, որ այն սկզբնավորվել է մերձավորարևելյան ու հունական տարածաշրջաններում և բանավոր ճանապարհով փոխանցվելով՝ հետագայում աղերսվել է վիպական նոր կերպարների, կորցրել նախնական իմաստը և դարձել բարոյախրատական պատում՝ ճակատագրի անխուսափելիության մասին:

Ճահ Աբասի աշխարհատեսությունը կոնկրետ գործողություն է, կոնկրետ հետևանքներով: Ծպտված շրջագայությամբ նա բախվում է մերկ իրականությանը, անօրեն իրադրություններին, բարքերի ու վարքի կանոնների անընդունելի, հոռի դրսևորումներին: Նա խորամուխ է լինում յուրաքանչյուր անօրեն արարքի, բացահայտում դրանց առաջացման պատճառները և տարբեր մոտեցումներով պայքարում դրանց վերացման համար: Հայ վիպական բանահյուսության մեջ լայն տարածում ունեցող և շրջանառվող մոտիվներից է խելացի ու աշխատասեր երկրագործի հնարամտության մասին մոտիվը, որը սերտորեն միահյուսվելով թագավորի ծույլ աղջկան դաստիարակելու (AaTh 901B*) մոտիվի հետ՝ դարձել է ինքնատիպ, ուսուցողական և բարոյախրատական պատում: Ճահի շրջագայության ժամանակն ըստ տարվա եղանակների սահմանափակում չունի, ուստի նա նաև ականատես է լինում երկրագործական աշխատանքների բոլորաշրջանին՝ գարնանային վարուցանքից մինչև բերքահավաք և դրանց ուղեկցող խնդիրներին: Շրջագայության ընթացքում շահը տեսնում է մի աներևակայելի բան. հերկվորը մի եզան հետ արորին լծել է իր մորը և վար է անում[44]: Ճահը պարզում է, որ երիտասարդը մորը խրատելու համար է լծել արորին, որովհետև ըստ մի տարբերակի՝ նա ծախսել է այն դրամը, որով մեկ լուծ եզ պիտի գնվեր, մի

[43] **Հարությունյան Ս.,** Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 404:

[44] ՀԱԲ 25, 2008, 221, № 80(80), «Ճահ Աբազի կոնդ ախչիկը», էջ 221, ՀԺՀ VI, 1973, 553, № 129, «Ճահի տղան Ճահ-Աբասը»:

այլ տարբերակում՝ ստիպում է որդուն՝ մորթել եզներից մեկը՝ տարեմուտը տոնելու համար: Տարբերակներից մեկում ծպտված շահը երիտասարդին փող է տալիս եզ գնելու համար, ըստ մի այլ տարբերակի՝ կարգադրում է իր նախրում գտնվող կատաղի ցուլը տալ նրան՝ որպես եզ օգտագործելու համար, նպատակ ունենալով՝ «… որ էն բուղեն էլ մի գիժ պ'ան ա, որ էն ա նա սպանի, որ ասեն բուղեն ռադ արավ էլի, անօրինական պանը, մորը լձել ա վար անըմ»[45]: Սակայն փորձառու երկրագործը կարողանում է հնազանդեցնել կատաղի ցուլին և շարունակել իր հերկը: Հատկանշական է, որ Շահ Աբասը սովորաբար հետամուտ է լինում իր կարգադրությունների կատարմանը և դրանց հետևանքներին: «Ետ էտ Շահ օղլի Շահ Աբազը կյ'ալիս ա տենըմ, որ ա՛յ տղա, էն ազ'ազիլ բուղեն եզն ա շինել, լձած հրե վար անըմ ա»[46]: Երիտասարդի կարողությամբ ու հնարամտությամբ հիացած շահը որոշում է նրան հանձնել իր ծույլ և անդաստիարակ աղջկան. «Ս'ա իմ ըխչկանն էլ դի կնիկ շինիլ»[47]: Առանձնապես ուշադրության արժանի է պատումի այն հատվածը, որն անուղղակի կերպով բնորոշում է արբունքի հասած աղջկա կարգավիճակը. «Տրա'ն էլ մի կոնդ ախչիկ ա ըլըմ՝ էտ Շահ օղլի Շահ Աբազին, ***թախտի ծերին նստցրած***, ծառայողնին պադավատ են անըմ ուտըմ ա, նստած ժ'ժ չի կյ'ալի»[48]: Պատումների խորքում թաքնված հնագույն աղջկան կին դարձնելու նվիրագործման ծեսը[49] շահաբասյան սյուժեներում վերաիմաստավորվել է թագավորի ծույլ և անհնազանդ աղջկան դաստիարակելու գործառույթում, որի փուլային զարգացումը հանգեցնում է հիմար-խելոք, անհնազանդ-հնազանդ, ծույլ-աշխատասեր փոխակերպումներին և տալիս է չսպասված աներևակայելի արդյունք. «Տրհա'նք կյ'ալիս են տենըմ, վեր ախչիկը մի խոլոք, մի հնազանդ, ղոչաղ ախչիկ ա տա'-

[45] ՀԱԲ 25, 2008, 221:

[46] Նույն տեղում:

[47] Նույն տեղում:

[48] Նույն տեղում: Բազմաթիվ հնագույն ազգերի մեջ արմատացած սովորույթ էր արբունքի հասած աղջիկներին մեկուսացնել, նստեցնել բարձր տախտակամածի վրա, որ ոտքը գետնին չդներ մի որոշ ժամանակ (Տե՛ս **Ֆրեզեր Ջ**., Ոսկե ճյուղը, մոգության և կրոնի ուսումնասիրություն, Ե., 1989, էջ 700–715):

[49] Թագավորի աղջիկը օտարվում է իր սոցիալական միջավայրից, հայտնվում է սոցիալական այլ միջավայրում՝ նոր կարգավիճակ ձեռք բերելու համար (աղջիկ-կին) անցնում է փորձությունների շղթայով՝ յուրաքանչյուր փորձության համար որպես խրախուսանք համապատասխան վարձատրություն է ստանում և փոխակերպվում կամ վերամարմնավորվում է նոր կարգավիճակ ունեցող անհատի՝ կնոջ:

ռել, վեր էլ ասիլու չի: Տըհնանք ըրմանըմ են, հվատըմ չեն, թե էս էն շանշ, կըտաղած ախչիկն ա…»[50]:

Շահաբասյան սյուժեն անուղղակիորեն մթագնված կերպով վերարտադրում է նվիրագործման ծեսի մոդելը՝ առաջին պլան մղելով դաստիարակության բարոյախրատական խնդիրները՝ կարևոր եզրահանգմամբ.. «… ով որ պինն չի անըմ, հաց չեն տալի նրան…», այսինքն՝ պատումի հիմքում ընկած է «ով աշխատի, նա կուտի» բանաձևը:

Սույն հեքիաթային տիպում համաձուլվել են երկու մոտիվ՝ խարսխված խելացի, հնարամիտ և ձեռներեց երկրագործի վարքագծի վրա: Երկու մոտիվներում էլ երկրագործին առաջադրվում են թվացյալ անլուծելի խնդիրներ, որոնց բարեհաջող լուծման համար շահը նրան կնության է տալիս իր աղջկան: Այս սյուժեում ծպտված շրջագայությունը Շահ Աբասին հնարավորություն է տվել բացահայտել երկրագործի հակաօրինական գործողության պատճառները, փորձության ենթարկել նրան, ըստ արժանվույն գնահատել նրա հնարամտությունն ու աշխատասիրությունը և առաջադրել երկրորդ բարդ խնդիրը, այն է՝ ծույլ աղջկա դաստիարակությունը:

Գյուղաշխարհի հետ աղերսվող մոտիվները կառուցված են սոցիալական անապահով վիճակի, աշխատանքային գործիքների և բազմաթիվ այլ բնույթի մանր ու մեծ խնդիրների ամբողջության վրա: Խնդրահարույց երևույթներից է նաև գործազրկությունը, որի պատճառով հաճախ մարդիկ ստիպված են լինում զբաղվել գողությամբ: Գողության մոտիվով պատումներում հաճախ շեշտվում է, որ «Պարսկաստանում Շահ Աբասի ժամանակ միշտ կյինղություն ա ըլըմ…»[51]: Գողերին բացահայտելու համար ծպտված Շահ Աբասը նրանց ներկայանում է որպես գող և առաջարկում իր ընկերակցությունը: Փաստորեն կերպարանափոխված շահն անձամբ գտնում է անորսալի գողերին, նրանց հետ մասնակցում գողությանը, ապա նրանց բռնել տալիս:

Գողության մոտիվի շուրջ ծավալվող շահաբասյան սյուժեներում[52] (AaTh 950, AaTh 951A*, AaTh 951C) ի հայտ է գալիս ծպտված Շահ Աբասի

---

[50] ՀԺՀ VI, 1973, 553, № 129, «Շահի տղեղա Շահ-Աբասը»:

[51] ՀԱԲ 25, 2008, 212, № 76(76), «Կյինղն ու Շահ Աբասը»:

[52] ՀԱԻԲԱ FFVII: 7924,02–7927,00, «Շահի տղա Շահ Աբասը», բանահավաք Ա. Կարապետյան, Իջևանի շրջան, Աչաջուր գյուղ, բանասաց Ս. Փիրումյան, 1970, FEI: 2381–2393, «Շահ Աբազն ու կյողերը», Է. Խեմչյան, Շամշադինի շրջան, գյուղ Թովուզ, բանասաց՝ Հ. Արզումանյան, 1979 թ., Ա. Կարապետյանի ֆոնդ, «Շահ Աբասն ու կյողերը», «Գանձակի գավառի հայ ժողովրդական բանահյուսությունից», էջ 6–89, 1977, Ռուբեն Բաղրամյանի ֆոնդ, «Շահ-Աբաս-1», «Ժողովրդական բանահյուսություն», էջ 114,

ամենազորությունը: Առանձնահատուկ շնորհներով օժտված գողերը (ցանկացած կողպեք բացել, շան լեզուն հասկանալ, գիշերով տեսած մարդուն ցերեկով թիկունքից և նույնիսկ տասը տարի անց ճանաչել) անծանոթին ընդունում են իրենց խումբ, որովհետև նա օժտված է առանձնահատուկ շնորհով՝ եթե ոլորի բեղի ծայրը, կախաղան բարձրացվողին կազատեն:

Այս պյուժեներում Շահ Աբասի աշխարհատեսության նպատակներն անորսալի գողերին բացահայտելու խնդիրն է: Նա հետամուտ է լինում կասկածելի վարք դրսևորողներին և նրանց հայտնաբերում «մի քանդված տան մեջ», «…ճաշարանի … մի քյունջըմը», «մի խուլ կամրջի տակ», «ճըմփըմը նստած» թաքուն խորհուրդ անելիս, շահում է նրանց վստահությունը, մասնակցում սեփական գանձարանի կողոպուտին և գողոնի բաժանմանը: Բռնված և կախաղան տարվող գողերին Շահ Աբասն իր առանձնահատուկ շնորհով (գողերն ի դեմս Շահ Աբասի ճանաչում են իրենց ընկերոջը) և արքայական զորությամբ ազատում է նրանց մահապատժից, ներում է և ոսկի է նվիրում ու հնարավորություն է տալիս վերափոխվելու և նոր կյանք սկսելու: Իրապատում հեքիաթների այս խումբն անշուշտ կառուցված է իրական տարբեր դեպքերի համադրությամբ, իսկ հանգուցալուծումը ժողովրդական զանգվածների բաղձալի ելքն է, որը որոշակիացվել և ըստ ժողովրդական պատկերացումների կապվել է «… ըշխարքես տար…»[53] Շահ Աբասի հետ, որի ամենազորությունը կասկածի ենթակա չէր:

Շահաբասյան գրեթե բոլոր պատումներում աշխարհատեսությունը կամ թագավորի ծպտված շրջագայությունը որպես գլխավոր մոտիվ իր շուրջն է հավաքում բազմաթիվ ինքնատիպ, բարոյախրատական պյուժեներ: Պատումների հետաքրքրաշարժ պյուժետային զարգացումներով, թեմատիկ լայն ընդգրկումով, ժողովրդի կյանքի, կենցաղի ու բազմաթիվ խնդիրների ճշմարիտ բացահայտումներով պայմանավորված է դրանց կենցաղավարման ու տարածման մեծ ժողովրդականությունը:

Հայ պատմավիպական պյուժեներում Շահ Աբասի աշխարհատեսության մոտիվի քննարկումը ցույց է տալիս.

ա) Թագավորի աշխարհատեսության մոտիվը նպաստում է բազմաթիվ հարակից պյուժեների ու մոտիվների զարգացմանը,

---

1985 թ., Աղբ. ՍՍՀ Շամխորի շրջան, Ջազիր գյուղ, ՀԱԲ 14, 1983, 152, № 50(59), «Շահ Աբաս», ՀԱԲ 25, 2008, 224, № 83(83), «Շահ Աբասի շնորքը»:

[53] ՀԺՀ VII, 1979, 526, № 198, «Ամմեն հինչ տղըմպրթին ծրեռքեն ա», բանահավաք Մ. Առաքելյան, բանասաց՝ Գ. Թունյան, Գորիս:

բ) ի հայտ է բերում Շահ Աբասի վիպական կերպարի բազմաբնույթ ու հակասական էությունը,

գ) աշխարհատեսությունը հնարավորություն է տալիս խորամուխ լինել պատմական որոշակի ժամանակահատվածի սոցիալական, հասարակական խնդիրներին, ինչպես նաև սովորույթներին, հավատալիքներին, վարքի չգրված կանոններին և այլն,

դ) ծպտված շրջագայությունը ոչ միայն Շահ Աբասի կերպարին ուղեկցող պարտադիր տարրերից մեկն է, այլև նպաստող միջոց, որով բացահայտվում է շահի մարդկային նկարագիրը թե՛ որպես թագավոր, թե՛ որպես մարդ-անհատ:

THE SHAH ABBAS MODEL OF THE KING'S WANDERING AMONGST HIS PEOPLE IN THE ARMENIAN FOLKLORE

KHEMCHYAN E.

Summary

In the historical epic stories of Armenian folklore, among other images, the theme of wandering is closely referred to the image of Shah Abbas. Shah's wandering in disguise provides an original starting position for certain fairy-tale themes, which are distinctive for Shah Abbas stories. The wandering of the Shah was not an end in itself, but was dictated by the concern of a thorough and comprehensive study and solution of national, political, and social issues. In folk stories Shah Abbas appears in an image of a dervish or peddler, a poor peasant or a beggar, accompanied by his close and reliable vizier. The disguise gives him the opportunity to be in everything and interfere in the ongoing events as a monarch.

The research of the theme of Shah Abbas' wandering in the Armenian historical and epic subjects shows that:

a. the theme of the king's wanderings promotes the development of numerous contiguous plots and themes;

b. identifies the heterogeneous and contradictory essence of the epic image of Shah Abbas;

c. wandering provides an opportunity to penetrate into social, public issues of a historically definite period, as well as into customs, beliefs, unrecorded standards of behavior;

d. masked wandering is not only one of the mandatory elements adhering to the image of Shah Abbas, but also a facilitating means through which the human image of the shah is revealed both as a king and as a person.

МОТИВ ХОЖДЕНИЯ ЦАРЯ В НАРОД В ШАХАББАССКИХ СЮЖЕТАХ АРМЯНСКОГО ФОЛЬКЛОРА

ХЕМЧЯН Э.

Резюме

В историко-эпических сюжетах армянского фольклора мотив хождения царя в народ часто находит воплощение в образе Шаха Аббаса и является отправной точкой для определенных сказочных сюжетов. Хождение царя в народ было продиктовано необходимостью изучения жизни народа и решения государственных, политических, социальных задач. В фольклорных сюжетах Шах Аббас выступает в образе дервиша, коробейника, бедного крестьянина или попрошайки, которого сопровождает его надежный везир.

Исследование мотива хождения Шаха Аббаса в народ в армянских историко-эпических сюжетах показывает, что:

а) мотив хождения царя способствует развитию смежных сюжетов;

б) выявляет противоречивую сущность эпического образа Шаха Аббаса;

в) позволяет представить социальные, общественные задачи, а также обычаи, верования и неписаные нормы поведения;

г) хождение инкогнито является одним из обязательных элементов, сопровождающих образ Шаха Аббаса, и способствует выявлению человеческого облика шаха как царя и как личности.